ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԻՃՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՔԱՂՎԱԾՔ ՈՐՈՇՈՒՄԻՑ

03. 09 2015թ. N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԻՃՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի հունվարի 17-ի №30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>>№ 1918-Ն որոշման և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ 5, դեմ 0 , ձեռնպահ 0 համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող գլխավոր հատակագծի՝ համաձայն հավելվածի 0,1145հա հողերից, որից համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտսական նշանակության 0.0241 հա արոտավայրը և 0.0904հա այլ հողատեսքը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորեա՝ <<էներգետիկայի օբյեկտների հողեր>> գործառնական նշանակությամբ՝ հետագայում, մեկ քառակուսի մետրը երեք հարյուր քառասուներկու /342/ ՀՀ դրամ արժեքով ուղղակի վաճառքի կարգով օտարել ,,Բարձրավոլտ էլեկտրացանցեր,, փակ բաժնետիրական ընկերությանը , համաձայն հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետի , Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հրազդան ՋԷԿ - Շինուհայր ենթակայան 220կՎ էլեկտրահաղորդման օդային գծի / հենասյուների/ կառուցման և սպասարկման համար:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքումիքի մարզի Լիճք գյուղական համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Լիճք համայնքի ղեկավար Գ.Գրիգորյան